



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ board@ysu.am , www.y-su.am

№ 016 «04» մարտի 2020թ.

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝
2020թ. մարտի 4-ին տեղի ունեցած հետաձգված թիվ 16 նիստի
(հարցման կարգով)

ք. Երևան

Հարցման կարգով անցկացված նիստին մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 19-ը (կից ներկայացվում է արձանագրության ստորագրացուցակը):

Օրակարգը՝

1. 2018-2019 ուստարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության և 2016-2020 թթ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրով 2018-2019 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականի հաստատում:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2019թ. (հունվար-դեկտեմբեր ամիսներ) եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականի մասին հաղորդում:
3. Ընթացիկ հարցեր
 - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար սանիտարական մաքրության ծառայության մատուցման գնման պայմանագրի (N «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/145») հաստատում:
 - «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության մատուցման պետական գնման պայմանագրի (N «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/140») հաստատում:

Խորհրդի քարտուղար Գ. Հայրապետյանի կողմից Խորհրդի 32 անդամներին ուղարկվել է Խորհրդի անդամների կողմից տրված հարցերը և ստացված պատասխանները (ստորև ներկայացվում է):

Խորհրդի անդամ Համազասպ Դանիելյանի հարցերը.

Հարց 1.

ԵՊՀ 2019թ. (հունվար-դեկտեմբեր ամիսներ) եկամուտների և ծախսերի նախահաշվի կատարողականում Հավելված 5-ի, 1.1.4 կետում նշված է Լրավճար գիտակրթական գործունեության համար (էջ 22): Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն դրանց հատկացման կարգի, չափանիշների, չափաբաժինների ու ստացողների շրջանակի վերաբերյալ:

Հարց 2.

Ընդհանրապես բոլոր ծախսերի արդյունավետության գնահատման համակարգը ինչպիսին է, այդ թվում նաև ոչ ֆինանսական չափանիշների առկայության դեպքում: Այսինքն, ինչպես է որոշվում այս կամ այն ծախսը, որ չափով է ծառայում իր նպատակին:

ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Գևորգյանի պատասխանները.

Հարց 1-ի պատասխան

Հավելված 5-ի 1.1.4 կետում նշված լրավճարը հատկացվել է «Երևանի պետական համալսարանի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ին համապատասխան: Նշված կարգին կարելի է ծանոթանալ հետևյալ էջում.

<http://documentation.y-su.am/wp-content/uploads/2018/07/karg.pdf>

Այդ կարգով նախատեսված տարբեր հոդվածներով լրավճար է հատկացվել շուրջ 800 աշխատակցի:

Հարց 2-ի պատասխան

Վերը նշված կարգով կատարված ծախսերի արդյունքում.

ա) ավելանում են համացանցում տեղադրված դասախոսությունների քանակը,

բ) չնայած գիտական հրապարակումների ընդհանուր թվի նվազմանը (կապված աշխատակիցների թվի նվազման հետ) ավելանում է ազդեցության գործակցով հանդեսներում տպագրությունների թիվը,

գ) ավելանում է «Web of Science» և «Scopus» շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում հրապարակումների թիվը:

Եղել են նաև այլ դրական տեղաշարժեր: Այս իմաստով այդ կարգով նախատեսված ծախսերը ծառայել են իրենց նպատակին:

Ընդհանրապես ասած, ԵՊՀ-ում կատարված բոլոր ծախսերի արդյունավետության գնահատման չափանիշներ չկան: Ծախսերը պլանավորվում և կատարվում են ռազմավարական ծրագրին համապատասխան: Լինում են նաև չնախատեսված կամ հրատապ ծախսեր: Օրինակ, չպլանավորված մանր և խոշոր դրամաշնորհների մրցույթներում հաղթելը, որևէ տարածքում վթարային վիճակի առաջանալը և այլն: Նման ծախսերը տարեկան կարող են կազմել մինչև մի քանի հարյուր միլիոն դրամ:

1. **2018-2019 ուստարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության և 2016-2020 թթ. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրով 2018-2019 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականի հաստատում:** Խորհրդի քարտուղար Գ. Հայրապետյանի կողմից Խորհրդի 32 անդամներին ուղարկվել է օրակարգի այս

հարցի հաստատման քվեաթերթիկ, որը լրացվել և վերադարձվել է Խորհրդի քարտուղար Գ. Հայրապետյանին: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 3-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 3-րդ ենթակետով՝

1. Հավանություն տալ 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքներին:

2. Հավանություն տալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով 2018-2019 ուստարում նախատեսված աշխատանքների կատարողականին:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2018-2019 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

2. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար սանիտարական մաքրության ծառայության մատուցման գնման պայմանագրի (N «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/145») հաստատում:** Խորհրդի քարտուղար Գ. Հայրապետյանի կողմից Խորհրդի 32 անդամներին ուղարկվել է օրակարգի այս հարցի հաստատման քվեաթերթիկ, որը լրացվել և վերադարձվել է Խորհրդի քարտուղար Գ. Հայրապետյանին: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 19, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 17-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 17-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար սանիտարական մաքրության ծառայության մատուցման գնման պայմանագիրը (N «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/145»)՝ համաձայն հավելվածի:

3. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության մատուցման պետական գնման պայմանագրի (N «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/140») հաստատում:** Խորհրդի քարտուղար Գ. Հայրապետյանի կողմից Խորհրդի 32 անդամներին ուղարկվել է օրակարգի այս հարցի հաստատման քվեաթերթիկ, որը լրացվել և վերադարձվել է Խորհրդի քարտուղար Գ. Հայրապետյանին: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 17-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 17-րդ ենթակետով՝ հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար անվտանգության ապահովման ծառայության մատուցման պետական գնման պայմանագիրը (N «ԵՊՀ-ԲՄԾՁԲ-19/140»)՝ համաձայն հավելվածի:

Խորհրդի նախագահ՝

Գ. Մուրադյան

Խորհրդի քարտուղար՝

Գ. Հայրապետյան